ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՏՉԵԼ ԱՅՍ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ՔՆՆԵԼ:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ Հունիսի 10, 2025 թ.

Գաղտնիության գործելակերպերի սույն ծանուցագիրը («Ծանուցագիր») վերաբերում է ատամնաբուժական, տեսողական և օրթոդոնտիկ պրակտիկաներին, որոնք կապ ունեն Hero Practice Services-ի հետ: Յուրաքանչյուր առանձին պրակտիկայի հողում է կատարվում որպես «Պրակտիկա»:

Մենք հարգում ենք ձեր, ինչպես նաև ձեր երեխաների գաղտնիությունը, և օրենքով պարտավոր ենք պահպանել պաշտպանված առողջապահական տեղեկության գաղտնիությունը (Protected Health Information, «PHI»)՝ Առողջապահական ապահովագրության փոխադրելիության և հաշվետվողականության օրենքի (Health Insurance Portability and Accountability Act, «HIPAA») և այլ դաշնային ու նահանգային օրենքների համաձայն:

Այս ծանուցագիրը նկարագրում է ձեր PHI-ի վերաբերյալ մեր օրինական պարտականություններն ու գաղտնիության գործելակերպերը, ներառյալ՝ անապահով PHI-ի տվյալների խախտումից հետո ձեզ տեղեկացնելու մեր պարտականությունը, PHI-ի թույլատրված օգտագործումները և բացահայտումները, ինչպես նաև PHI-ի վերաբերյալ ձեր իրավունքները:

Կարող եք որևէ պահի խնդրել մեր Ծանուցագրի պատճենը: Մեր գաղտնիության գործելակերպերի մասին հավելյալ տեղեկության կամ սույն Ծանուցագրի հավելյալ պատճենների համար խնդրում ենք կապ հաստատել Պրակտիկայի Գործողությունների կառավարչի (Operations Manager) հետ կամ էլեկտրոնային փոստ ուղարկել այս տվյալով՝ compliance@herodvo.com:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ՝

- Ստանալ պաշտպանված առողջապահական տեղեկությունների թղթային կամ էլեկտրոնային պատճենը:
- Ուղղել ձեր պաշտպանված առողջապահական տեղեկությունները:
- Խնդրել, որ սահմափակենք մեր կիսած տեղեկությունները որոշ դեպքերում:
- Ստանալ ցուցակը նրանց, ում հետ կիսել ենք ձեր/ ձեր երեխայի տեղեկությունները:
- Խնդրել գաղտնի հաղորդակցություն:
- Ստանալ պատճենը սույն գաղտնիության ծանուցագրի:
- Ընտրել մեկին, ով կգործի ձեր փոխարեն:
- Ներկայացնել գանգատ, եթե կարծում եք, որ խախտել ենք ձեր/ ձեր երեխայի գաղտնիության իրավունքները:

ՁԵՐ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Դուք ունեք մի շարք ընտրանքներ այն մասին, թե ձեզ հետ հաղորդակցվելիս՝ ինչպես ենք օգտագործում և կիսում տեղեկությունները, ընտանիքին և ընկերների հայտնում ձեր/ձեր երեխայի վիճակի մասին, աղետյալների օգնություն տրամադրում և մեր ծառայությունները շուկայադրում:

ՄԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր տեղեկությունները, երբ բուժում ենք, հաշիվ ենք ուղարկում ծառայությունների համար, ղեկավարում ենք մեր կազմակերպությունը, հարգում ենք օրենքը, աշխատում ենք դատաբժշկական փորձագետի կամ թաղման տնօրենի հետ, արձագանքում ենք հյուսվածքների կամ օրգանների նվիրատվության խնդրանքների, զբաղվում ենք աշխատողների փոխհատուցման, իրավապահ մարմինների և այլ կառավարական պահանջներով և արձագանքում ենք դատական հայցերի և իրավական գործողությունների:

PHI-Ի ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

PHI-ին ներկայացնում է ձեր մասին առողջապահական տեղեկություններ, որոնք ինչ-որ անձ կարող է օգտագործել ձեզ/ ձեր երեխային նույնականացնելու համար, ինչը մենք պահում կամ փոխանցում ենք էլեկտրոնային, բանավոր կամ գրավոր ձևով: PHI-ին ներառում է այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են ձեր/ ձեր երեխայի անունը, կոնտակտային տվյալները, անցյալ, ներկա կամ ապագա ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը կամ բժշկական վիճակները, առողջապահական արտադրանքների կամ ծառայությունների համար վճարումը կամ դեղատոմսերը:

ՏԻՐՈՒՅԹԸ

Մենք ստեղծում ենք ձեր/ձեր երեխայի խնամքի և առողջապահական ծառայությունների արձանագրությունը՝ խնամք տրամադրելու և որոշակի օրինական պահանջմունքներ հարգելու համար: Սույն Ծանուցագիրը վերաբերում է մեր կազմած բոլոր PHI-երին և մեր ստացած թմրանյութերի օգտագործման բուժման առնչվող արձանագրություններին՝ 42 U.S.C. §290Dd-2-ի և 42 C.F.R. 2-րդ Մասի համաձայն: Մենք նաև հետևում ենք այդպիսի արձանագրությունների համար 2-րդ Մասի գաղտնիության պաշտպանություններին:

Մենք և մեր աշխատակիցներն ու աշխատուժի մյուս անդամները հետևում ենք Այս Ծանուցագրի նկարագրած պարտականություններին և գաղտնիության գործելակերպերին, ինչպես նաև բոլոր փոփոխություններին, երբ դրանք ուժի մեջ են մտնում:

ՍՈՒՅՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք կարող ենք փոխել սույն Ծանուցագրի պայմանները, և փոփոխությունները կտարածվեն մեր ունեցած բոլոր տեղեկությունների վրա, որոնք վերաբերում են ձեզ: Նոր ծանուցագիրը մատչելի կդառնա այն խնդրելուց հետո, մեր գրասենյակում և մեր կայքում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մենք անհապաղ կտեղեկացնենք ձեզ, եթե պատահի տվյալների խախտում, որը կարող է վտանգել ձեր/ձեր երեխայի PHI-ի գաղտնիությունը կամ անվտանգությունը: Շատ դեպքերում, մենք ձեզ կտեղեկացնենք գրավոր, առաջին կարգի փոստի միջոցով, կամ կարող ենք ձեզ էլեկտրոնային փոստ ուղարկել, եթե մեզ տրամադրել եք ձեր ընթացիկ էլեկտրոնային փոստի հասցեն և նախապես համաձայնել եք ծանուցումներ ստանալ էլեկտրոնային եղանակով: Մի շարք դեպքերում, մեր գործարարական գործընկերները, որոնք ավելի մանրամասն նկարագրված են ստորև, կարող են տրամադրել ծանուցումը: Սահմանափակ դեպքերում, երբ ունենք անբավարար կամ հնացած կոնտակտային տվյալներ, կարող ենք ծանուցում տրամադրել օրինականորեն ընդունելի այլընտրանքային ձևով:

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ինչ վերաբերում է ձեր/ ձեր երեխայի առողջապահական տեղեկություններին, դուք ունեք որոշակի իրավունքներ: Այս բաժինը բացատրում է ձեր իրավունքներն ու ձեր պարտավորություններից մի քանիսը: Դուք իրավունք ունեք՝

ՍՏԱՆԱԼ ՁԵՐ PHI-Ի ՊԱՏՃԵՆԸ: Կարող եք խնդրել տեսնել կամ ձեռք բերել պատճենը ձեր PHI-ի, որը մենք պահպանում ենք ձեր/ ձեր երեխայի մասին: Այլ կերպ, կարող եք խնդրել ամփոփումը ձեր/ ձեր երեխայի PHI-ի կամ բացատրությունը ձեր/ ձեր երեխայի PHI-ի: Կարող եք հարցնել մեզնից ինչպես անել դա: Որոշ պարզաբանումներ ձեր հասանելիության իրավունքների վերաբերյալ՝

- Մենք պահանջում ենք մատչելիության խնդրանքները ներկայացնել գրավոր: Խնդրում ենք իմացնել Պրակտիկային, եթե ցանկանում եք արձանագրությունների խնդրանքի ձև կամ կապ հաստատեք այս տվյալով՝ compliance@herodvo.com.
- Կարող եք խնդրել, որ մենք տրամադրենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն ընտանիքի անդամի, այլ անձի կամ նշանակված իրավաբանական անձի: Մենք պահանջում ենք, որ այդ խնդրանքները ներկայացնեք գրավոր՝ ձեր ստորագրությամբ, և հստակ նշեք նշանակված անձին և PHI-ի ուղարկման վայրը.
- Կարող եք խնդրել, որ ձեր PHI-ի պատճենը ուղղենք ձեր ընտրած երրորդ կողմի.

ԽՆԴՐԵԼ, ՈՐ ՈՒՂՂԵՆՔ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Կարող եք խնդրել, որ ուղղենք կամ փոփոխենք ձեր/ ձեր երեխային վերաբերող մեր պահպանած PHI-ն, որը ձեր կարծիքով սխալ է կամ անճիշտ: Այսպիսի խնդրանքների համար նշեք սխալ կամ անճիշտ PHI-ն և ներկայացրեք ձեր խնդրանքը հիմնավորող պատճառ.

ԽՆԴՐԵԼ, ՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵՆՔ ԱՅՆ, ԻՆՉ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԱՄ ԿԻՍՈՒՄ ԵՆՔ: Իրավունք ունեք մեզանից խնդրելու, որ սահմանափակենք ձեզ/ ձեր երեխային վերաբերող մեր օգտագործած կամ կիսած PHI-ն: Կարող եք մեզ դիմել և խնդրել, որ չօգտագործենք կամ չկիսենք մի որոշակի PHI՝ բուժման, վճարման կամ գործողությունների համար, կամ ձեր խնամքի մեջ ներգրավված որոշակի անձանց հետ: Այս խնդրանքների համար մենք պարտավոր չենք համաձայն լինել և կարող ենք «ոչ» ասել, եթե դա կազդի խնամքի վրա. բայց մենք կհամաձայնվենք տեղեկություններ չբացահայտել առողջապահական ծրագրի՝ վճարման կամ առողջապահական գործողությունների նպատակով, եթե խնդրված սահմանափակումը վերաբերում է առողջապահական առարկայի կամ ծառայության, որի համար դուք կամ մեկ ուրիշը, բացի առողջապահական ծրագրից, վճարել եք լրիվ ձեր գրպանից, եթե օրենքով այլ բան չի պահանջվում:

ՍՏԱՆԱԼ ՑՈՒՑԱԿԸ ՆՐԱՆՑ, ՈՒՄ ՀԵՏ ԿԻՍԵԼ ԵՆՔ ՁԵՐ PHI-Ն: Իրավունք ունեք պահանջել հաշվետվություն մեր կողմից կատարված PHI-ի որոշակի բացահայտումների համար: Այս խնդրանքների համար՝

- Մենք կպատասխանենք ոչ ուշ քան մինչև 60 օր՝ խնդրանքն ստանալուց հետո:
- Մենք կընդգրկենք բոլոր բացահայտումները, բացառությամբ բուժման, վճարման և առողջապահական գործողություններին վերաբերող, ինչպես նաև որոշ այլ բացահայտումների, ինչպիսիք են նրանք, որ ձեր խնդրանքով ենք կատարել. և
- Մենք տարեկան կտրամադրենք մեկ անվճար հաշվետվություն, բայց կգանձենք ողջամիտ, ծախսի վրա հիմնված վճար, եթե խնդրեք մեկ ուրիշը՝ 12 ամսվա ընթացքում: Մենք նախապես կտեղեկացնենք ձեզ ծախսերի մասին և դուք այդ պահին կարող եք որոշել ետ վերցնել կամ փոփոխել ձեր խնդրանքը:

ԸՆՏՐԵԼ ՄԵԿԻՆ, ՈՎ ԿԳՈՐԾԻ ՁԵՐ ՓՈԽԱՐԵՆ: Եթե ինչ-որ անձի տվել եք բժշկական լիազորագիր կամ ինչ-որ անձ ձեր օրինավոր խնամակալն է, այդ անձը կարող է ձեր իրավունքները գործադրել և ընտրություններ կատարել ձեր PHI-ի վերաբերյալ: Մենք որևէ գործողության ձեռնարկելուց առաջ կհաստատենք, որ անձն ունի այս լիազորությունը և կարող է գործել ձեր փոխարեն:

ԽՆԴՐԵԼ ԳԱՂՏՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Իրավունք ունեք խնդրել, որ առողջական հարցերի վերաբերյալ ձեզ հետ հաղորդակցենք որոշակի եղանակով կամ որոշակի վայրում: Օրինակ, կարող եք խնդրել, որ ձեզ հետ կապ հաստատենք միայն աշխատավայրում կամ հատուկ հասցեով: Այս խնդրանքների համար պետք է նշեք, թե ինչպես և որտեղ եք ցանկանում, որ կապ հաստատենք ձեզ հետ, և մենք կընդառաջենք ողջամիտ խնդրանքների:

ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԳԱՆԳԱՏ: Իրավունք ունեք գանգատվելու, եթե կարծում եք, որ խախտել են ձեր/ ձեր երեխայի իրավունքները: Մենք վրիժառության չենք դիմի ձեզ դեմ՝ գանգատ ներկայացնելու համար: Կարող եք գանգատ ներկայացնել կա՛մ մեզ՝ դիմելով Պրակտիկայի Գործողությունների կառավարչին կամ compliance@herodvo.com-ին կամ ԱՄՆ առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարության (US Department of Health and Human Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակին (Office for Civil Rights), այցելելով www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints/ կայքը:

ՁԵՐ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Որոշակի առողջական տեղեկությունների համար, կարող եք մեզ ասել ձեր ընտրությունները մեր կիսելիքի վերաբերյալ: Եթե ունեք հստակ նախընտրություն, թե ինչպես ենք կիսում ձեր/ ձեր երեխայի տեղեկությունները ստորև նկարագրված իրավիճակներում, խնդրում ենք կապ հաստատել այս տվյալով՝ compliance@herodvo.com: Մենք ողջամիտ ջանքեր կգործադրենք ձեր հրահանգներին հետևելու համար:

ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ԻՆՉՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԸՆՏՐԱՆՔ՝ ՄԵԶ ԱՍԵԼՈՒ ԱՐԴՅՈՔ՝

- Կիսել, օրինակ՝ ձեր/ ձեր երեխայի PHI-ն, ընդհանուր վիճակը կամ գտնվելու վայրը՝ ընտանիքի, մտերիմ ընկերների կամ ձեր/ ձեր երեխայի խնամքի մեջ ներգրավված ուրիշների հետ:
- Կիսել տեղեկություններ աղետի հետևանքների վերացման իրավիճակում, օրինակ՝ օգնության կազմակերպությանը՝ օգնելու գտնել կամ տեղեկացնել ձեր/ ձեր երեխայի ընտանիքին, մտերիմ ընկերներին կամ ձեր/ ձեր երեխայի խնամքի մեջ ներգրավված ուրիշների:
- Օգտագործել կամ կիսել ձեր/ ձեր երեխայի մասին թմրանյութերի չարաշահման բուժման արձանագրությունները մեզ օգուտ բերող դրամահավաքչական նպատակներով:

  Եթե չեք կարող մեզ ասել ձեր նախընտրությունը, օրինակ՝ եթե ուշակորույս եք, մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի արյան տեղեկությունները կիսել, եթե համոզված ենք, որ դա լավագույնս կծառայի ձեր շահերին, ըստ մեր լավագույն դատողության: Մենք կարող ենք նաև ձեր/ ձեր երեխայի տեղեկությունները կիսել ըստ անհրաժեշտության, որպեսզի նվազեցնենք առողջության կամ անվտանգության վերաբերող լուրջ և վերահաս սպառնալիքը:

ՄԵՆՔ ՁԵՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԿԻՍԵՆՔ ՄԻԱՅՆ ԳՐԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ՝

- Շուկայադրական նպատակների համար:
- Վաճառելու կամ այլապես ձեր/ ձեր երեխայի PHI-ի բացահայտման դիմաց հատուցում ստանալու համար:
- Այս Ծանուցագրում չնկարագրված այլ օգտագործումների և բացահայտումների համար:

Անհատի դեմ քաղաքացիական, քրեական, վարչական կամ օրենսդրական վարույթում մենք չենք օգտագործի կամ չենք կիսի թմրանյութերի չարաշահման բուժման արձանագրությունների վերաբերյալ տեղեկությունները, եթե դատարանի հրամանը մեզանից չի պահանջում կամ դուք մեզ չեք տալիս ձեր գրավոր թույլտվությունը:

Կարող եք որևէ պահի չեղարկել ձեր լիազորությունը, բայց դա չի ազդի տեղեկությունների վրա, որոնք արդեն օգտագործել կամ բացահայտել ենք:

ՁԵՐ PHI-Ի ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Օրենքը թույլատրում կամ պահանջում է, որ օգտագործենք կամ բացահայտենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն զանազան պատճառներով, որոնք բացատրում ենք այս Ծանուցագրի մեջ: Մենք ներառել ենք որոշ օրինակներ, բայց չենք թվարկել բոլոր թույլատրելի օգտագործումներն ու բացահայտումները: PHI-ն օգտագործելիս կամ բացահայտելիս կամ այլ աղբյուրից PHI խնդրելիս, մենք կգործադրենք ողջամիտ ջանքեր՝ ձեր/ձեր երեխայի PHI-ին վերաբերող մեր օգտագործումը, բացահայտումը կամ խնդրանքը սահմանափակելու այն նվազագույնով, որը անհրաժեշտ է մեր նպատակին հասնելու համար: PHI-ն, որը օրենքը թույլատրում կամ պահանջում է, որ բացահայտենք, կարող է հետագայում կիսվել ստացողների կողմից և այլևս պաշտպանված չէ օրենքով կամ գործող նախազգուշական միջոցներով ու չափավորումներով, մինչ մենք ենք դրա տերը:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈՒԺՈՒՄ: Մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն օգտագործել կամ բացահայտել և կիսել այլ բուժող մասնագետների հետ, ներառյալ բժիշկները, բուժքույրերը, տեխնիկները, բժշկական ուսանողները կամ հիվանդանոցի անձնակազմը, որոնք ներգրավված են ձեր/ ձեր երեխայի խնամքի մեջ: Օրինակ, մենք կարող ենք բացահայտել ձեր/ ձեր երեխայի ընդհանուր առողջական վիճակին վերաբերող տեղեկություններ բժիշկների, ովքեր բուժում են ձեզ/ ձեր երեխային մի որոշակի վնասվածքի կամ վիճակի համար:

ՀԱՇԻՎՆԵՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ: Մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն օգտագործել և բացահայտել՝ հաշիվ ուղարկելու և վճարում ստանալու առողջապահական ծրագրերից կամ ուրիշներից: Օրինակ, մենք կիսում ենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն ձեր առողջապահական ապահովագրության ծրագրի հետ, որպեսզի նա վճարի ձեր/ ձեր երեխայի ստացած ծառայությունների համար:

ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ: Մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն օգտագործել և բացահայտել՝ մեր պրակտիկան վարելու, ձեր խնամքը բարելավելու և անհրաժեշտության դեպքում ձեզ հետ կապ հաստատելու համար: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել ձեր/ ձեր երեխայի PHI-ն՝ ձեր ստացած ծառայությունների և բուժման կառավարման կամ մեր առողջապահական ծառայությունների որակը վերահսկելու համար:

ԱՅԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի տեղեկությունները կիսել այլ եղանակներով, սովորաբար հանրային առողջապահության կամ հետազոտական նպատակներով կամ հանրային բարիքին նպաստելու համար: Թույլատրված օգտագործումների և բացահայտումների մասին հավելյալ տեղեկության համար տեսեք www.hhs.gov/ocr/privacy/hipaa/understanding/consumers/index.htmlկայքը: Օրինակ՝ այս այլ օգտագործումներն ու բացահայտումները կարող են ներառել՝

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր երեխայի PHI-ն արտաքին անձանց կամ իրավաբանական անձանց, որոնք ծառայություններ են մատուցում մեր անունից, ինչպիսիք են հաշվեքննությունը, իրավական մարզը կամ արձանագրությունը («Գործարարական գործընկերներ»): Օրենքը պահանջում է, որ մեր

գործարարական գործընկերներն ու նրանց ենթակապալառուները պաշտպանեն ձեր/ ձեր երեխայի PHI-ն այնպես, ինչպես մենք ենք անում: Մենք նաև պայմանագրով պահանջում ենք, որ այս կողմերը օգտագործեն և բացահայտեն PHI-ն միայն PHI-ի թույլատրված և պատշաճորեն պաշտպանված կերպով:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐ: Մենք մասնակցում ենք առողջական տեղեկությունների փոխանակումների, որոնք աջակցում են անդամների միջև էլեկտրոնային տեղեկությունների կիսմանը՝ բուժման, վճարման և առողջապահական գործողությունների նպատակներով:

ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱՐԳՈՒՄ: Օրինակ՝ մենք կկիսենք ձեր/ ձեր երեխայի PHI-ն, եթե Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարությունը (Department of Health and Human Services) պահանջում է դա, երբ հետաքննում ենք գաղտնիության օրենքներին մեր համապատասխանությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ: Օրինակ՝ մենք կարող ենք կիսել ձեր /ձեր երեխայի PHI-ն՝ վնասվածքների, ծնունդների և մահերի մասին տեղեկագրելու. հիվանդությունների կանխարգելման. դեղերի բացասական ազդեցությունների կամ բժշկական սարքավորումների արտադրական թերությունների տեղեկագրման. երեխաների կասկածելի անտեսման կամ չարաշահման կամ տնային բռնության մասին տեղեկագրման. կամ հանրային առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ սպառնալիքի առաջքն առնելու համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ: Օրինակ՝ մենք կարող ենք կիսել ձեր/ ձեր երեխայի PHI-ն՝ ի պատասխան դատարանի կամ վարչական հրամանի կամ դատական ծանուցագրի. բացահայտման խնդրանքի կամ այլ օրինական գործընթացի: Այնուամենայնիվ, շատ իրավիճակներում մեզ արգելված է կիսել, և չենք կիսի ձեր/ ձեր երեխայի PHI-ն հետաքննությունների կամ օրինական գործողությունների համար, որոնք վերաբերում են վերարտադրողական առողջության խնամքի մատչելիությանը և ծառայություններին, որտեղ այդ խնամքը օրինական է այնպես, ինչպես մատուցվում է: Օրինակ՝ օրենքը արգելում է մեզ օգտագործել կամ բացահայտել ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքին վերաբերող PHI-ն շատ դեպքերում, պատասխանելու հետաքննության խնդրանքներին, դատարանի հրամաններին կամ դատական ծանուցումներին, որոնք հետամտում են տեղեկությունների կամ պարտավորություն են սահմանում որևէ անձի վրա՝ օրինական կերպով տրամադրված վերարտադրողական առողջության խնամքի հետամտելու, այն ձեռք բերելու, տրամադրելու կամ հեշտացնելու համար. կամ նույնականացնելու որևէ անձի, ով ենթակա է քրեական, քաղաքացիական կամ վարչական հետաքննության կամ օրինական գործողության, ներառյալ իրավապահ մարմինների հետաքննությունների, քրեական հետապնդումների, ընտանեկան իրավունքի վարույթների կամ նահանգային արտոնագրման վարույթների ժամանակ՝ օրինական կերպով տրամադրվող վերարտադրողական առողջության խնամքի հետամտելու, այն ձեռք բերելու, տրամադրելու կամ հեշտացնելու համար:

Վերարտադրողական առողջության խնամքի հետամտելու, այն ձեռք բերելու, տրամադրելու կամ հեշտացնելու որոշ օրինակներ ներառում են՝ վերարտադրողական առողջության խնամքի օգտագործումը. վերարտադրողական առողջության խնամքի իրականացումը, հայթայթումը կամ վճարումը. վերարտադրողական առողջության խնամքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը. վերարտադրողական առողջության խնամքի կազմակերպումը, ապահովումը, տնօրինումը, դրա համար ծածկույթի տրամադրումը, հաստատումը կամ խորհրդատվության տրամադրումը. կամ այս գործողություններից որևէ մեկը փորձելը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ: Օրինակ, մենք կարող ենք կիսել ձեր/ ձեր երեխայի PHI-ն առողջապահական հետազոտությունների որոշ տեսակների համար, որոնք չեն պահանջում ձեր լիազորությունը:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉՆԵՐԻ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ: Օրինակ, մենք կարող ենք կիսել PHI-ն դատաքննիչների, դատաբժշկական փորձաքննիչների կամ թաղման տնօրենների հետ, երբ անհատը մահանում է:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԻ: Օրինակ, մենք կարող ենք կիսել ձեր/ ձեր երեխայի PHI-ն՝ ձեզանից լիազորված օրգանների կամ հյուսվածքների նվիրատվություն կամ ձեզ համար փոխպատվաստում կազմակերպելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ, ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր/ ձեր երեխայի PHI-ն աշխատողների փոխհատուցման պահանջների համար. դաշնային կամ նահանգային գործակալությունների կողմից առողջապահական վերահսկողության գործունեության համար. իրավապահ մարմինների նպատակների համար կամ իրավապահ մարմինների պաշտոնյայի հետ. կամ պետական մասնագիտացված գործառույթների համար, ինչպիսիք են զինվորական և վետերանների գործունեությունները, ազգային անվտանգությունը և հետախուզությունը, նախագահական պաշտպանական ծառայությունները կամ բժշկական պիտանիությունը:

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԱՄՔԻ PHI

Ըստ օրենքի, եթե մենք հավաքում, ստանում կամ պահպանում ենք PHI, որը հավանականորեն կապված է ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքի հետ, մի շարք դեպքերում պետք է ձեռք բերենք PHI ստացողներից հավաստիք, որ նրանք այդ PHI-ն չեն օգտագործի կամ կիսի օրենքով արգելված նպատակի համար: Օրինակ՝ այս իրավիճակները կարող են ներառել՝

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Օրինակ՝ մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքին վերաբերող PHI-ն մի շարք իրավիճակներում կիսել վերահսկող գործակալության ստուգումների կամ քննությունների, քաղաքացիական կամ քրեական հետաքննությունների կամ դատավարությունների կամ արտոնագրությունների գործողությունների համար:

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ: Օրինակ՝ մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքին վերաբերող PHI-ն կիսել ի պատասխան դատարանի կամ վարչական հրամանի, դատական ծանուցագրի կամ բացահայտման խնդրանքի:

ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ: Օրինակ՝ մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքին վերաբերող PHI-ն մի շարք իրավիճակներում կիսել իրավապահպանական նպատակներով, ներառյալ ի պատասխան դատարանի հրամայած երաշխագրի կամ իրավապահ մարմինների պաշտոնյայի խնդրանքի՝ հանցագործության զոհի մասին տեղեկությունների համար:

ԴԱՏԱՔՆՆԻՉՆԵՐ ԿԱՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԻՉՆԵՐ: Օրինակ՝ մենք կարող ենք ձեր/ ձեր երեխայի վերարտադրողական առողջության խնամքին վերաբերող PHI-ն մի շարք իրավիճակներում կիսել դատաքննչի կամ դատաբժշկական փորձագետի հետ՝ մահացած անձին նույնականացնելու, մահվան պատճառը որոշելու կամ օրենքով լիազորված այլ պարտականությունների համար: